ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՎԻՎ/65/2024

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան 15 ապրիլի 2024թ.

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը, մասնակցությամբ Հանձնաժողովի անդամներ Մարիամ Գալստյանի (նիստը նախագահող), Արամայիս Փաշինյանի և Լիլիթ Ալեքսանյանի (այսուհետ՝ Հանձնաժողով), 2024 թվականի ապրիլի 15-ին քննելով Վայոց Ձորի մարզի Վայք համայնքի ղեկավար Մխիթար Մաթևոսյանի նկատմամբ Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված զանցանքի հատկանիշներով առերևույթ խախտման կապակցությամբ հարուցված վարչական իրավախախտման վերաբերյալ թիվ ՎԻՎ/65/2024 գործը՝

ՊԱՐԶԵՑ

I. Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթի նախապատմությունը.

1.1 Հանձնաժողովը, ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված իրավակարգավորումներով, իրականացրել է 2022 թվականի օգոստոսի 11-ին «Հետք» էլեկտրոնային լրատվամիջոցի «Վայքի համայնքապետը 537 միլիոն դրամի պայմանագրեր է կնքել իր կնոջ ընկերության հետ» վերտառությամբ հրապարակման հիման վրա Վայոց Ձորի մարզի Վայք համայնքի ղեկավար Մխիթար Մաթևոսյանի նկատմամբ 2022 թվականի սեպտեմբերի 16-ին անհամատեղելիության պահանջների առերևույթ խախտման և

իրավիճակային շահերի բախման առերևույթ դեպքի վերաբերյալ հարուցված թիվ 02/2022 վարույթի շրջանակներում հաստատված 2022 թվականի սեպտեմբերի 6-ի թիվ ՎՁՄ-ՎՀ-ԲՄԱՇՁԲ-22/2-1 պայմանագրի և 2022 թվականի հունիսի 1-ի թիվ ՎՁՄ-ՎՀ-ԳՀԱՇՁԲ-22/7 պայմանագրի վերաբերյալ տվյալները վերջինիս կողմից 2023 թվականի ապրիլի 27-ին ներկայացված «Պաշտոնատար անձի՝ 2022 թվականի գույքի, եկամուտների, ծախսերի և շահերի» տարեկան հայտարարագրում (այսուհետ նաև՝ Հայտարարագիր) ներկայացված լինելու վերաբերյալ ստուգում, որի արդյունքում պարզել է.

1.2 Հայտարարագրի «Ե.6. Պաշտոն զբաղեցնող անձի և նրա ընտանիքի անդամների կողմից, ինչպես նաև նրանց մասնակցությամբ կազմակերպությունների կողմից Հայաստանի Հանրապետության կամ համայնքների հետ կնքված՝ հինգ միլիոն դրամը կամ դրան համարժեք արտարժույթը գերազանցող պայմանագրերը» բաժնում Վայոց Ձորի մարզի Վայք համայնքի ղեկավար Մխիթար Մաթևոսյանի կողմից տվյալներ չեն ներկայացվել «Մավշին» ընկերության և Վայքի համայնքապետարանի միջև.

Ա) 2022 թվականի սեպտեմբերի 6-ին կնքված 394,881,470.00 ՀՀ դրամ ընդհանուր արժեքով թիվ ՎՁՄ-ՎՀ-ԲՄԱՇՁԲ-22/2-1 պայմանագրի,

Բ) 2022 թվականի հունիսի 1-ին կնքված 6,498,000.00 ՀՀ դրամ ընդհանուր արժեքով թիվ ՎՁՄ-ՎՀ-ԳՀԱՇՁԲ-22/7 պայմանագրի վերաբերյալ:

1.3 Հանձնաժողովը, Մխիթար Մաթևոսյանի Հայտարարագրում չներկայացված տվյալների հիմքով Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված զանցանքի հատկանիշներով վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթ նախաձեռնելու՝ 2024 թվականի մարտի 29-ի որոշման կապակցությամբ 2024 թվականի ապրիլի 2-ին Մխիթար Մաթևոսյանին հասցեագրել է թիվ 01/1037-2024 ծանուցումը՝ այն օրենսդրությամբ սահմանված կարգով հանձնված (ստացված) համարվելու օրվան հաջորդող երկրորդ աշխատանքային օրը, ժամը՝ 16:00-ին հրավիրելով Հանձնաժողով վերոնշյալ առերևույթ խախտման վերաբերյալ վարչական իրավախախտման մասին արձանագրություն կազմելու, իսկ չորրորդ աշխատանքային օրը, ժամը՝ 16:00-ին՝ առերևույթ իրավախախտման հիմքով կազմված արձանագրության և վերաբերելի նյութերի հիման վրա վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննությանը մասնակցելու:

1.4 2024 թվականի ապրիլի 11-ին վարույթի մասնակցից ստացված թիվ Մ-1711-2024 գրությամբ ներկայացվել է միջնորդություն, որով վերջինս վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրության կազմմանը ներկայանալու օր է համարել 2024 թվականի ապրիլի 11-ը և խնդրել է վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը կազմելիս, ինչպես նաև գործի քննությունն իրականացնելիս որպես բացատրություն ընդունել իր կողմից 2024 թվականի ապրիլի 5-ին Հանձնաժողով ներկայացված գրությամբ մատնանշված փաստարկները և պահանջը: Վերոնշյալի հաշվառմամբ՝ Հանձնաժողովը ծանուցմամբ նշված վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրության կազմման օր է համարել 2024 թվականի ապրիլի 11-ը, իսկ գործի քննության իրականացման համար սահմանված չորրորդ աշխատանքային օր է համարել 2024 թվականի ապրիլի 15-ը:

1.5 2024 թվականի մարտի 11-ին պատշաճ ծանուցված վարույթի մասնակցի բացակայությամբ կազմվել է վարչական իրավախախտման վերաբերյալ թիվ ՎԻՎ/90/24 արձանագրությունը՝ Օրենսգրքի 169.28րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված առերևույթ իրավախախտման հատկանիշով:

1.6 2024 թվականի ապրիլի 15-ին գործի քննությունն իրականացվել է պատշաճ ծանուցված վարույթի մասնակցի բացակայությամբ, գործի քննությունը հետաձգելու միջնորդություն չի ներկայացվել: Գործի քննության ընթացքում հիմք է ընդունվել նաև 2024 թվականի ապրիլի 15-ին Հանձնաժողովում վարույթի մասնակցից թիվ Մ-1711-2024 գրությամբ ստացված միջնորդությունը:

II. Վարույթի մասնակցի ներկայացրած դիրքորոշում ու պարզաբանումներ

Վարչական իրավախախտման վերաբերյալ թիվ ՎԻՎ/65/2024 գործի շրջանակներում արձանագրված առերևույթ իրավախախտման առնչությամբ 2024 թվականի ապրիլի 11-ին Հանձնաժողովում մուտքագրված թիվ Մ-1711-2024 և ապրիլի 15-ին մուտքագրված թիվ Մ-1743-2024 գրություններով Մխիթար Մաթևոսյանը խնդրել է գործի քննությունն իրականացնելիս, որպես բացատրություն ընդունել, իր կողմից 2024 թվականի ապրիլի 5-ին Հանձնաժողով ներկայացված գրությամբ (այսուհետ նաև՝ Գրություն) մատնանշված փաստարկները և պահանջը:

Գրությամբ Մխիթար Մաթևոսյանի կողմից մատնանշվել էր Վայք համայնքի ղեկավարի պաշտոնը ստանձնելուց առաջ՝ դեռևս 2021 թվականի հոկտեմբերի 8-ին Պետական եկամուտների կոմիտե ներկայացված դիմումի հիմքով՝ մինչև նշված ժամկետը «Մավշին» ՍՊԸ-ի տնօրեն հանդիսանալու, ինչպես նաև ՀՀ վարչապետի 2021 թվականի հոկտեմբերի 12-ի 1146-Ա որոշմամբ ՀՀ Վայոց Ձորի մարզի Վայք համայնքի ղեկավարի պաշտոնակատար նշանակվելուց հետո, մինչ օրս ձեռնարկատիրական գործունեությամբ չզբաղվելու, 2022 թվականի փետրվարի 11-ին «Մավշին» ՍՊԸ-ի բաժնեմասը վերջինիս կնոջը նվիրաբերված լինելու հանգամանքները, ինչպես նաև այդ ընթացքում ընկերության կողմից որևէ գործունեությամբ չզբաղվելու՝ մրցույթների, գնման գործընթացների չմասնակցելու, Ընկերության կողմից շինարարական և այլ աշխատանքներ կատարված չլինելու փաստարկները: Միաժամանակ, Գրությամբ, որպես, վարչական իրավախախտման վերաբերյալ իրավակարգավորումներին առնչվող պահանջ, վարույթի մասնակիցը խնդրել էր հարուցված վարույթը կարճել մեղքի բացակայության հիմքով:

III. Վարույթի համար էական նշանակություն ունեցող փաստեր

Հանձնաժողովը, ուսումնասիրելով թիվ ՎԻՎ/65/2024 գործում առկա նյութերը, կատարել է հանգամանքների քննություն և հաստատված է համարում, որ՝

3.1 Հայտարարագրի «Ե.6. Պաշտոն զբաղեցնող անձի և նրա ընտանիքի անդամների կողմից, ինչպես նաև նրանց մասնակցությամբ կազմակերպությունների կողմից Հայաստանի Հանրապետության կամ համայնքների հետ կնքված՝ հինգ միլիոն դրամը կամ դրան համարժեք արտարժույթը գերազանցող պայմանագրերը» բաժնում Վայոց Ձորի մարզի Վայք համայնքի ղեկավար Մխիթար Մաթևոսյանի կողմից տվյալներ չեն ներկայացվել «Մավշին» ընկերության (ՀՎՀՀ՝) (այսուհետ նաև՝ Ընկերություն) և Վայքի համայնքապետարանի միջև.

Ա) 2022 թվականի սեպտեմբերի 6-ին կնքված 394,881,470.00 ՀՀ դրամ ընդհանուր արժեքով թիվ ՎՁՄ-ՎՀ-ԲՄԱՇՁԲ-22/2-1 պայմանագրի,

Բ) 2022 թվականի հունիսի 1-ին կնքված 6,498,000.00 ՀՀ դրամ ընդհանուր արժեքով թիվ ՎՁՄ-ՎՀ-ԳՀԱՇՁԲ-22/7 պայմանագրի վերաբերյալ:

3.2 Արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի էլեկտրոնային միասնական գրանցամատյանում առկա տվյալների համաձայն՝ 2022 թվականի փետրվարի 16-ից Ընկերության 100% բաժնեմասի բաժնետեր է հանդիսանում Մերի Մեխակի Մարգարյանը:

3.3 Մխիթար Մաթևոսյանի կողմից 2023 թվականի ապրիլի 27-ին ներկայացված «Պաշտոնատար անձի՝ 2022 թվականի գույքի, եկամուտների, ծախսերի և շահերի» տարեկան հայտարարագրում առկա տվյալների համաձայն՝ Մերի Մեխակի Մարգարյանը հանդիսանում է Մխիթար Մաթևոսյանի կինը:

3.4 Հանձնաժողովի կողմից 2022 թվականի սեպտեմբերի 16-ին Մխիթար Մաթևոսյանի կողմից անհամատեղելիության պահանջների առերևույթ խախտման և իրավիճակային շահերի բախման առերևույթ դեպքի վերաբերյալ հարուցված թիվ 02/2022 վարույթի արդյունքում 2024 թվականի մարտի 11-ին ընդունված թիվ 02/2022-2024-Ա/Վ եզրակացությամբ հաստատված հանգամանք է հանդիսացել այն, որ Մխիթար Մաթևոսյանը, որպես Վայք համայնքի ղեկավար, իր ընտանիքի անդամի մասնակցությամբ կազմակերպության հետ կնքել է պայմանագրեր, որոնց գինը (արժեքը), ըստ վարույթում առկա նյութերի, գերազանցում է հինգ միլիոն ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը:

IV. Որոշումն ընդունելու իրավական հիմքերը և հիմնավորումները.

4.1 Վայոց Ձորի մարզի Վայք համայնքի ղեկավար Մխիթար Մաթևոսյանը «Հանրային ծառայության մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 34-րդ հոդվածով սահմանված կարգավորումների համաձայն՝ հանդիսանում է գույքի, եկամուտների, շահերի և ծախսերի հայտարարագրման պարտականություն ունեցող անձ:

4.2 Օրենքի 42-րդ հոդվածի (Շահերի հայտարարագրի բովանդակությունը) 6-րդ մասի համաձայն՝ հայտարարագրի՝ «Պաշտոն զբաղեցնող անձի և նրա ընտանիքի անդամների կողմից, ինչպես նաև նրանց մասնակցությամբ կազմակերպությունների կողմից Հայաստանի Հանրապետության կամ համայնքների հետ կնքված պայմանագրերը» բաժնում նշվում են **այն պայմանագրերը, որոնց գինը (արժեքը) գերազանցում է հինգ միլիոն Հայաստանի**

Հանրապետության դրամը կամ դրան համարժեք արտարժույթը, պայմանագրի տեսակը, կողմերը, նրանց հասցեները, տվյալներ պայմանագրի կնքման գործընթացի մասին, պայմանագրի կնքման օրը, ամիսը, տարին, գործողության ժամկետը, ինչպես նաև գինը (արժեքը): Նույն հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ տարեկան հայտարարագրում ներառվում են տվյալ տարվա **հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը կնքված պայմանագրերը:**

4.3 «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքի (այսուհետ նաև՝ Օրենսգիրք) 169.28-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ հայտարարատուի կողմից հայտարարագրում **անզգուշությամբ սխալ կամ ոչ ամբողջական տվյալ** ներկայացնելը առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից չորսհարյուրապատիկի չափով:

4.4 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով, ինչպես նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով՝ հաշվի առնելով սույն օրենքով սահմանված առանձնահատկությունները:

4.5 «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ **առանձին տեսակի վարչական վարույթների առանձնահատկությունները** սահմանվում են օրենքներով և Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով:

4.6 «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:

4.7 Օրենսգրքի 252-րդ հոդվածի համաձայն՝ մարմինն ապացույցները գնահատում է իր ներքին համոզմունքով, որը հիմնված է գործի՝ իրենց ամբողջությամբ վերցված բոլոր

հանգամանքների համակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա, ղեկավարվելով օրենքով և իրավագիտակցությամբ:

4.8 Օրենսգրքի 244.17-րդ հոդվածի համաձայն՝ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննում և վարչական տույժեր է նշանակում Հանձնաժողովը:

4.9 Օրենսգրքի 282-րդ հոդվածի համաձայն՝ քննելով վարչական իրավախախտման վերաբերյալ գործը, մարմինը (պաշտոնատար անձը) ընդունում է հետևյալ որոշումներից մեկը՝ 1) վարչական տույժ նշանակելու մասին, 2) գործի վարույթը կարճելու մասին:

4.10 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Հանձնաժողովը Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի արդյունքում ընդունում է որոշումներ, որոնք կարող են բողոքարկվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան՝ դատական կարգով:

Սույն գործով հաստատված փաստական հանգամանքների նկատմամբ կիրառելի իրավական նորմերի վերլուծության արդյունքում Հանձնաժողովն արձանագրում է.

Օրենքով սահմանված հայտարարագրման ենթակա տվյալներին վերաբերող իրավակարգավորումներով սահմանված պահանջները ամբողջական կերպով ներկայացված են նաև հայտարարագրերի լրացման էլեկտրոնային համակարգում, որտեղ հայտարարատուն հնարավորություն ունի ընտրել կոնկրետ գույքի տեսակը, դրա վերաբերյալ այլ տեղեկություններ, եկամտի տեսակը, դրա վերաբերյալ այլ տեղեկություններ, շահերի դեպքում՝ կազմակերպության անվանումը, կազմակերպությունում ունեցած ուղղակի կամ անուղղակի մասնակցության չափը, հավատարմագրային կառավարման հանձնված լինելը, ընտանիքի անդամի ներկայացվածությունը կազմակերպության կառավարման, վարչական կամ վերահսկողական մարմիններում, պաշտոն զբաղեցնող անձի և նրա ընտանիքի անդամների կողմից, ինչպես նաև նրանց մասնակցությամբ կազմակերպությունների կողմից Հայաստանի Հանրապետության կամ համայնքների հետ կնքված պայմանագրերի վերաբերյալ տեղեկություններ:

Հանձնաժողովի 2020 թվականի նոյեմբերի 12-ի N 04-Ն որոշմամբ սահմանվել են հայտարարագրի ներկայացման և հայտարարագրված տվյալներում փոփոխություն կատարելու կարգը, հայտարարագրի լրացմանը ներկայացվող պահանջները:

Առաջնորդվելով նշված որոշմամբ սահմանված հայտարարագրի լրացմանը ներկայացվող պահանջներով՝ Հանձնաժողովը հայտարարագրերի լրացման կարգի խախտում է որակում այն դեպքերը, երբ հայտարարագրման **ենթակա տվյալը** լրացվել է սխալ ենթաբաժնում: Այն դեպքում, երբ հայտարարատուի ներկայացրած տվյալին վերաբերող որևէ տվյալ չի լրացվում համապատասխան դաշտում և լրացվում է այլ ենթաբաժնում՝ հայտարարատուն թույլ է տալիս հայտարարագրի լրացման կարգի պահանջների խախտման արարք, մինչդեռ, Օրենքով պահանջվող ***հայտարարագրման ենթակա առանձին տվյալները չներկայացնելու կամ սխալ ներկայացնելու դեպքում՝ թույլ է տալիս ոչ ամբողջական կամ սխալ տվյալների ներկայացման արարք:***

Սույն գործով Մխիթար Մաթևոսյանը «Հայտարարատու պաշտոնատար անձի 2022 թվականի գույքի, եկամուտների, շահերի և ծախսերի» հայտարարագրում ***անզգուշությամբ*** ներկայացրել է հետևյալ ոչ ամբողջական տվյալները.

Հայտարարագրի «Ե.6. Պաշտոն զբաղեցնող անձի և նրա ընտանիքի անդամների կողմից, ինչպես նաև նրանց մասնակցությամբ կազմակերպությունների կողմից Հայաստանի Հանրապետության կամ համայնքների հետ կնքված՝ հինգ միլիոն դրամը կամ դրան համարժեք արտարժույթը գերազանցող պայմանագրերը» բաժնում Մխիթար Մաթևոսյանի կողմից տվյալներ չեն ներկայացվել «Մավշին» ընկերության և Վայքի համայնքապետարանի միջև.

Ա) 2022 թվականի սեպտեմբերի 6-ին կնքված 394,881,470.00 ՀՀ դրամ ընդհանուր արժեքով թիվ ՎՁՄ-ՎՀ-ԲՄԱՇՁԲ-22/2-1 պայմանագրի,

Բ) 2022 թվականի հունիսի 1-ին կնքված 6,498,000.00 ՀՀ դրամ ընդհանուր արժեքով թիվ ՎՁՄ-ՎՀ-ԳՀԱՇՁԲ-22/7 պայմանագրի վերաբերյալ:

Նշված արարքով Մխիթար Մաթևոսյանը ***խախտել է*** Օրենքի 42-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջները: Հետևաբար, Հայտարարագրում առկա է ոչ ամբողջական ներկայացված տվյալ:

Հաշվի առնելով արձանագրված խախտման նկատմամբ կիրառելի իրավական նորմերի պահանջները՝ սույն գործով առկա փաստերից հետևում է, որ Մխիթար Մաթևոսյանը Հայտարարագրում անզգուշությամբ ներկայացրել է ոչ ամբողջական տվյալներ, որի արդյունքում թույլ է տրվել Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված արարք:

Խախտման հիմքով պատասխանատվություն սահմանելու հարցը որոշելու համար Հանձնաժողովը գտնում է, որ անհրաժեշտ է յուրաքանչյուր գործով գնահատել, արդյո՞ք տվյալ խախտումը հանգեցրել է նորմով պաշտպանվող իրավահարաբերությունների խաթարմանը: Այս առնչությամբ էական է խախտման (արարքի) որակական կողմը:

Արարքի որակական կողմը գնահատելիս անհրաժեշտ է հաշվի առնել՝ արդյո՞ք արարքը կարող է պարունակել Օրենսգրքով սահմանված արարքի հատկանիշներ և այնպիսի էական վնաս չի պատճառել ֆիզիկական կամ իրավաբանական անձին, հասարակությանը, պետությանը, որի հիմքով սահմանված պատասխանատվությունը կդիտարկվի համաչափ:

Անդրադառնալով արձանագրված առերևույթ իրավախախտման առնչությամբ վարույթի մասնակցի կողմից 2024 թվականի ապրիլի 11-ին Հանձնաժողովում մուտքագրված թիվ Մ-1711-2024 և ապրիլի 15-ին մուտքագրված թիվ Մ-1743-2024 գրություններով ներկայացված դիրքորոշմանն առ այն, որ գործի քննությունն իրականացնելիս որպես բացատրություն ընդունվեն իր կողմից Գրությամբ մատնանշված փաստարկները և պահանջը՝ Հանձնաժողովն արձանագրում է, որ վարույթի մասնակցի կողմից վկայակոչված գրությամբ ներկայացված փաստարկներն ու պահանջը վերաբերելի են Հանձնաժողովի կողմից «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքով սահմանված առանձին տեսակի վարչական վարույթով իրականացված 2022 թվականի սեպտեմբերի 16-ին Մխիթար Մաթևոսյանի կողմից անհամատեղելիության պահանջների առերևույթ խախտման և իրավիճակային շահերի բախման առերևույթ դեպքի վերաբերյալ թիվ 02/2022 վարույթի շրջանակներում Հանձնաժողովի կողմից ընդունված եզրակացությամբ քննարկված և հաստատված փաստական հանգամանքներին:

Վերոնշյալի առնչությամբ Հանձնաժողովի 2024 թվականի ապրիլի 11-ի թիվ 01/1167-2024 գրությամբ ներկայացվել է պատասխան, որով, ըստ էության, անդրադարձ է կատարվել նաև առանձին տեսակի վարչական վարույթներին:

Մինչդեռ, սույն գործով քննարկման առարկա է Օրենքի 34-րդ հոդվածով սահմանված իրավակարգավորումների համաձայն՝ հայտարարատու պաշտոնատար անձի կողմից Հայտարարագիրն Օրենքով սահմանված պահանջների պահպանմամբ չներկայացնելու արարքը, որն առաջացնում է Օրենսգրքով նախատեսված վարչական պատասխանատվություն: Հետևաբար, Գրությամբ վկայակոչված փաստարկները սույն վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթում քննարկվող վարչական իրավախախտման օբյեկտիվ կողմին, այն է՝ Հայտարարագրում ոչ ամբողջական ներկայացված տվյալին՝ չհայտարարագրված պայմանագրերին, վերաբերելի չեն:

Այնուամենայնիվ, հաշվի առնելով այն, որ Գրությամբ վարույթի մասնակցի կողմից մատնանշվել էին «Մավշին» ՍՊԸ-ում իր՝ տնօրենի պաշտոնը դադարեցված լինելու, ընկերությունում ունեցած իր բաժնեմասն օտարելու, գնման գործընթացների չմասնակցելու, շինարարական և այլ աշխատանքներ Ընկերության կողմից կատարված չլինելու փաստարկները, միաժամանակ, ներկայացվել էր հարուցված վարույթը մեղքի բացակայության հիմքով կարճելու պահանջը, Հանձնաժողովը լրացուցիչ անդրադառնում է իր կողմից կայացված նախորդ որոշումներով շահերի հայտարարագրում ոչ ամբողջական տվյալների հայտարարագրման հետ կապված գործերով իրավախախտումների բնույթի որակումներին:

Այսպես, Հանձնաժողովն իր կողմից կայացված նախորդ որոշումներով շահերի հայտարարագրում ոչ ամբողջական տվյալների հայտարարագրման հետ կապված՝ նվազ նշանակություն ունեցող է որակել այն դեպքը, երբ պաշտոնատար անձը հայտարարագրի Դ.1. **«Մասնակցությունը առևտրային կազմակերպություններում»** բաժնում չի հայտարարագրել իր մասնակցությունն առևտրային կազմակերպությունում, սակայն գործում առկա փաստերի համաձայն հաստատվել է, որ առևտրային կազմակերպության գործունեությունը ***ժամանակավոր դադարեցված է*** (ՎԻՎ 05/22): Հանձնաժողովը գտել է, որ կազմակերպության գործունեությունը ժամանակավոր դադարեցված լինելու հանգամանքով պայմանավորված՝ արդյունքում այդ նորմով պաշտպանվող իրավահարաբերությունների էությունը չի խաթարվել:

Մեկ այլ գործով Հանձնաժողովը նվազ նշանակություն ունեցող է որակել այն դեպքը, երբ ***նույն հայտարարագրի*** **«Առկա են արժեթղթեր և այլ ներդրումներ»** բաժնում ներկայացվել

է **հայտարարատուի բաժնեմասնակցությունը** առևտրային կազմակերպությանը, սակայն **«Հայտարարատու պաշտոնատար անձի շահերի հայտարարագիր» բաժնի «Մասնակցությունն առևտրային կազմակերպություններում»** ենթաբաժնում չի ներկայացվել (ՎԻՎ/27/2022): Այս առումով Հանձնաժողովն արձանագրել է, որ «Առկա են արժեթղթեր և այլ ներդրումներ» բաժնում ներկայացված տվյալները հանդիսանում են այն անհրաժեշտ և համակարգային առումով փոխկապակցված տվյալները, որոնք բավարար են պաշտոնատար անձի հայտարարագրերի պատշաճ վերլուծությունն իրականացնելու համար: Նշվածից բացի, վերոնշյալ բաժնում ներկայացված տվյալներով ապահովվել է նաև պետական պաշտոն զբաղեցնող անձի իրական գույքային դրության վերաբերյալ հանրության տեղեկացվածությունը, որպիսի պայմաններում գործնականում չի խաթարվել հանրային հաշվետվողականությունը: Նշվածով պայմանավորված՝ տվյալ խախտումն որակվել է որպես նվազ նշանկություն ունեցող, ինչը «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքի 21-րդ հոդվածի ուժով նշված խախտման կապակցությամբ վարչական պատասխանատվությունից ազատելու և գործի վարույթը կարճելու հիմք է հանդիսացել:

Սույն գործով առկա փաստական հանգամանքները տարբերվում են վկայակոչված գործերով ներկայացված հանգամանքներից, նախևառաջ, այն առումով, որ առհասարակ առկա չէ հայտարարագրված տվյալ **Հայտարարագրի՝** «Պաշտոն զբաղեցնող անձի և նրա ընտանիքի անդամների կողմից, ինչպես նաև նրանց մասնակցությամբ կազմակերպությունների կողմից Հայաստանի Հանրապետության կամ համայնքների հետ կնքված՝ **հինգ միլիոն դրամը կամ դրան համարժեք արտարժույթը գերազանցող պայմանագրերը» բաժնում**, հաջորդիվ այն առումով, որ նշված տվյալները չեն հանդիսանում հայտարարագրի այլ բաժիններում ներկայացվող տվյալների հետ փոխկապակցված տվյալներ, հետևաբար հայտարարագրման ենթակա՝ Օրենքով սահմանված գումարը գերազանցող պայմանագրերի վերաբերյալ տվյալը ենթակա է ներկայացման միայն Հայտարարագրի համապատասխան բաժնում:

Սույն պարագայում, «Մավշին» ՍՊԸ-ն հանդիսացել է ***գործող կարգավիճակ ունեցող*** առևտրային կազմակերպություն, միաժամանակ, Հայտարարագրում լրացվող տվյալներն ընդգրկող հաշվետու ժամանակահատվածում (01.01.2022-31.12.2022) առկա են եղել

վարույթի մասնակցի ընտանիքի անդամի մասնակցությամբ կազմակերպության կողմից համայնքի հետ կնքված պայմանագրեր, որոնք Օրենքով նախատեսված առանձին հայտարարագրման ենթակա տվյալներ են:

Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում ընդգծել այն իրողությունը, որ հայտարարագրման համակարգը նպատակ է հետապնդում պաշտոնատար անձանց վերաբերյալ տեղեկությունների բացահայտման միջոցով ձևավորել պետական ինստիտուտների նկատմամբ հանրային վստահություն և բարձրացնել նրանց գործունեության թափանցիկությունը:

Սույն գործում առկա փաստական տվյալների համաձայն՝ Մխիթար Մաթևոսյանը, որպես Վայոց Ձորի մարզի Վայք համայնքի ղեկավար, իր լիազորությունների շրջանակում համայնքի կարիքների համար հինգ միլիոն դրամը գերազանցող պայմանագրեր է կնքել Օրենքի իմաստով իր հետ փոխկապակցված անձի՝ կնոջ բաժնեմասնակցությամբ առևտրային կազմակերպության հետ, մինչդեռ, Հայտարարագրում որևէ տվյալ չի ներկայացվել վկայակոչված պայմանագրերի վերաբերյալ: Տվյալ պարագայում, Հանձնաժողովի՝ որպես իր մանդատի շրջանակներում շահերի բախման ինստիտուտի նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմնի, էական նշանակություն ունի օրենսդրությամբ սահմանված պահանջների պահպանումը՝ հայտարարագրում հավաստի և ամբողջական տվյալներ ներկայացնելու հայտարարատու անձի պարտականության ոչ պատշաճ կատարման արդյունքում իրավանորմով պաշտպանվող հասարակական հարաբերությունների էությունը: Տվյալ պարագայում, սույն գործով քննարկվող հայտարարագրման ենթակա տվյալների հայտարարագրմամբ է հնարավոր ապահովել պետական պաշտոն զբաղեցնող անձի հանրային հաշվետվողականության, վերջինիս հանրային գործունեության նկատմամբ վստահության, պետական պաշտոն զբաղեցնող անձի կոռուպցիոն ռիսկերից զերծ գործունեության՝ օրենսդրի կողմից հետապնդվող նպատակները:

Միաժամանակ, հաշվի առնելով, որ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված արարքի համար նախատեսված է վարչական պատասխանատվության ոչ հստակ սահմանաչափ (***փուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից չորսհարյուրապատիկի չափով***), Հանձնաժողովն արձանագրում

է, որ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով վարչական տույժ կիրառելիս պետք է հաշվի առնել ինչպես խախտման բնույթը, այնպես էլ պատասխանատվությունը ծանրացնող կամ մեղմացնող հանգամանքները:

Հանձնաժողովն արձանագրում է, որ սույն գործով վարչական վարույթի մասնակցի գործողություններում առկա չէ Օրենսգրքի 33-րդ հոդվածով սահմանված վարչական իրավախախտման համար պատասխանատվությունը մեղմացնող հանգամանք:

Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում նշել նաև, որ Մխիթար Մաթևոսյանի կողմից անհամատեղելիության պահանջների առերևույթ խախտման և իրավիճակային շահերի բախման առերևույթ դեպքի վերաբերյալ Հանձնաժողովում հարուցված թիվ 02/2022 վարույթի արդյունքում 2024 թվականի մարտի 11-ին ընդունված թիվ 02/2022-2024-Ա/Վ եզրակացությամբ, որպես Վայք համայնքի ղեկավար, վերջինիս կողմից իր ընտանիքի անդամի մասնակցությամբ կազմակերպության հետ սույն վարույթում քննարկվող պայմանագրերի կնքման գործողություններում հաստատված է համարել շահերի բախման իրավիճակի առկայությունը: Տվյալ պարագայում, Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված զանցանքի կապակցությամբ վարչական իրավախախտման վերաբերյալ թիվ ՎԻՎ/65/2024 գործն իրավասու մարմնի կողմից քննվում և վարչական պատասխանատվության միջոցի կիրառման հարցը լուծվում է արդեն իսկ կատարված իրավախախտման կապակցությամբ: Սույն գործով իրավախախտումը կատարվել է 2023 թվականի ապրիլի 27-ին համապատասխան պայմանագրերի մասով ոչ աբողջական տվյալներ պարունակող Հայտարարարագրի ներկայացմամբ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հանձնաժողովի վերոնշյալ եզրակացությամբ Մխիթար Մաթևոսյանի գործողություններում շահերի բախման իրավիճակի առկայության վերաբերյալ փաստը հաստատվել է 2024 թվականի մարտի 11-ին՝ Հանձնաժողովն արձանագրում է, որ սույն գործով ***իրավախախտման կատարման պահին*** (2023 թվականի ապրիլի 27-ին Հայտարարարագրի ներկայացման օրվա դրությամբ) վարչական վարույթի մասնակցի գործողություններում առկա չէ Օրենսգրքի 34-րդ հոդվածով սպառիչ կերպով սահմանված վարչական իրավախախտման համար պատասխանատվությունը ծանրացնող որևէ հանգամանք:

Ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 24-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, 26-րդ հոդվածով, «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով, 244.17-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վայոց Ձորի մարզի Վայք համայնքի ղեկավար Մխիթար Մաթևոսյանի նկատմամբ կիրառել վարչական տույժ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի՝ **200 000** (երկու հարյուր հազար) ՀՀ դրամի չափով:

2. Տուգանքը պետք է վճարվի իրավախախտողի կողմից գանձապետական 900005001335 «Իրավախախտումների համար կիրառվող վարչական տուգանքներ և պատժամիջոցներ» հաշվեհամարին՝ վճարման անդորրագրի **«նպատակ» դաշտում պարտադիր նշելով սույն որոշման համարը**:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Մխիթար Մաթևոսյանին այն սահմանված կարգով հանձնելու (հանձնված համարվելու) հաջորդող օրվանից:

4. Սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո Մխիթար Մաթևոսյանին տրամադրել եռօրյա ժամկետ «Հայտարարատու պաշտոնատար անձի 2022 թվականի գույքի, եկամուտների, շահերի և ծախսերի» տարեկան հայտարարագրի համապատասխան բաժնում ուղղումներ կատարելու համար:

5. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետում:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝

ՄԱՐԻԱՄ ԳԱԼՍՏՅԱՆ